

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

24.10.2013

Առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացված շինարարական աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլաչյանն աշխատանքային այցելությունների շրջանակներում ծանոթացել է Չարենցավանի 4-րդ դպրոցում ընթացող շինարարական աշխատանքներին:

Մարզպետի տեղակալը գրուցել է դպրոցի տնօրենի և վերանորոգումն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչների հետ, պատասխանել է նրանց հուզող հարցերին, ինչպես նաև տվել է համապատասխան ցուցումներ: